**ԹԻՎ 28 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15-Ա**

22 **սեպտեմբերի** 2022**թ**.
**ք.Նոր Հաճըն**

**ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ «ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՐՄԵՆ ԱՎԱԳՅԱՆԻ** 21.09.2022**Թ**. **ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ**

Ուսումնասիրելով Բյուրեղավան համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող «Միասնություն» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Արմեն Ավագյանի 21.09.2022թ. դիմում-բողոքը (այսուհետ՝ դիմում)՝ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

**Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. **Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը**

Թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով 2022 թվականի սեպտեմբերի 21-ին ներկայացված Բյուրեղավան համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող «Միասնություն» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Արմեն Ավագյանի դիմումում նշված է.

«Հարգելի պ-ն Մուկուչյան, սույն դիմում-բողոքով հայտնում եմ Ձեզ, որ Տարածքային ինքնակառավարման մարմինների 2022 թվականի սեպտեմբերի 25-ի ընտրությունների հետ կապված պաստառների փակցման համար սահմանված է որոշակի կարգ:

Հաշվի առնելով վերոգրյալը, Բյուրեղավան քաղաքում Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ներկայացուցիչների կողմից այս պահի դրությամբ արձանագրել ենք հետևյալ խախտումները.

1. ՀՀ Կոտայքի մարզի համայնքի ղեկավար Հ.Բալասյանի 09.08.2022թ.-ի թիվ 361-Ա որոշման համաձայն առանձնացվել և սահմանվել են օրենքով սահմանված կարգով Բյուրեղավան համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր /սույն դիմում-բողոքին կից ներկայացվում է Բյուրեղավան համայնքի ղեկավարի որոշման պատճենը/:

Սակայն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները, համաձայն կատարված լուսանկարների, կոպիտ խախտումներով փակցրել են թվով 40-ից ավել օրենքով սահմանված վայրերից դուրս պաստառներ, մասնավորապես, Բյուրեղավան քաղաքի 27, 33, 32, 38 շենքերի վրա, ինչպես նաև Բյորեղավան քաղաքի էլեկտրական ենթակայանի վրա:

Բացի դրանից, 15.08.2022թ.-ին ԱՁ Տիգրան Լիպարիտի Մարտիրոսյանը դիմում է ներկայացրել Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին Բյուրեղավան

համայնքի տարածքում գտնվող լուսավորության հենասյուների վրա զոդման եղանակով գովազդային կրիչների տեղադրման թույլտվություն ստանալու համար՝ 2 ամիս ժամկետով, ընդամենը 40 կրիչ՝ յուրաքանչյուրը 3.14 քմ, ընդհանուր՝ 125.6 քմ մակերեսով՝ պարտավորվելով վճարել առաջացած տուրքերը:
Տվյալ դիմումին ի պատասխան 23.08.2022թ.-ի թիվ Ե-1066/22 գրությամբ Բյուրեղավան համայնքի ղեկավարը հայտնել է, որ թույլատրվում է 2 ամիս ժամկետով Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցի վրա 14 հատ, Կոտայքի փողոցի վրա 9 հատ, Վազգեն Սարգսյան փողոցի վրա 2 հատ, Սամվել Վարդանյան փողոցի վրա 2 հատ, Վազգեն Ա Վեհափառ փողոցի վրա 3 հատ և Օղակաձև փողոցի վրա 10 հատ լուսավորքության հենասյունի վրա տեղադրել ընդհանուր թվով 40 հատ գովազդային կրիչներ՝ յուրաքանչյուրը 3.14 քմ մակերեսով: Միաժամանակ տեղեկացվել է, որ Բյուրեղավանի համայնքապետարանի հետ անհրաժեշտ է կնքել պայմանագրեր Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 62-Ն և 2021 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 64-Ն որոշումների համաձայն արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման համար՝ Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202411 և 900105202064 հաշվեհամարներին վճարելով համապատասխանաբար 376800 ՀՀ դրամ և 40000 ՀՀ դրամ /կից ներկայացվում են դիմումի և պատասխան գրության պատճենները/:

Սակայն մինչ օրս այդ պայմանագրերը չեն կնքվել ԱՁ Տիգրան Լիպարիտի Մարտիրոսյանի կողմից Բյուրեղավան համայնքապետարան չներկայանալու պատճառով: Եվ այժմ այդ հենասյուների վրա Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը անօրինական ձևով, կոպիտ խախտումներ թույլ տալով փակցրել է թվով 40 պաստառներ: /Լուսանկարների պատճենները կից ներկայացվում են/:
2.Հայտնում եմ նաև, որ ֆեյսբուք սոցիալական ցանցում Բյուրեղավանի Արև մանկապարտեզի և Բյուրեղավանի Ավագ դպրոցի պրոֆիլներում իրականացվում է Քաղաքացիական պայմանագիր կուսակցության գովազդներ, ինչը ևս հանդիսանում է օրենքի խախտում:

Հարգելի պ-ն Մուկուչյան, հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումները վերացնելու նպատակով, քանի որ դրանով խախտվում են մյուս կուսակցությունների, ՀՀ քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը:»:

Դիմումին կից ներկայացվել են թվով 9 լուսանկար, Ա/Ձ Տիգրան Մարտիրոսյանի դիմումը Բյուրեղավանի համայնքի ղեկավարին, Բյուրեղավանի համայնքի ղեկավարի 23.08.2022թ. Ե-1066/22 պատասխան գրությունը, թվով 4 սկրինշոթ և «Բյուրեղավան համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին» համայնքի ղեկավարի 09.08.2022թ. թիվ 361-Ա որոշումը:

2. **Թիվ** 28 **Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հիմնավորումները** (**պատճառաբանությունները**) **և եզրահանգումը**

2.1. Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 25-ի ընտրություններին մասնակցելու համար առաջադրվել և 2022 թվականի օգոստոսի 24-ին գրանցվել են՝

«Միասնություն» կուսակցությունների դաշինքը, «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Արդար Հայաստան» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները:

Դիմումի և դիմումին կից ներկայացված փաստաթղթերի համաձայն՝ ««Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները, համաձայն կատարված լուսանկարների, կոպիտ խախտումներով փակցրել են թվով 40-ից ավել օրենքով սահմանված վայրերից դուրս պաստառներ, մասնավորապես, Բյուրեղավան քաղաքի 27, 33, 32, 38 շենքերի վրա, ինչպես նաև Բյուրեղավան քաղաքի էլեկտրական ենթակայանի վրա:»:

Նախընտրական քարոզչության իրավական կարգավորումը սահմանված է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 19-23-րդ հոդվածներով:

Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ «1. Թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցություններն իրավունք ունեն անարգել տարածելու քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր:

2. Հանրության համար տեսանելի քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են փակցվել միայն՝

1) հատուկ այդ նպատակով առանձնացված տեղերում, վճարովի գովազդային վահանակներում, ընտրական շտաբների վրա.

2) ֆիզիկական անձանց համաձայնությամբ՝ նրանց պատկանող կամ նրանց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների (բացառությամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, հանրակրթական դպրոցների, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի, հասարակական սննդի կամ առևտրի օբյեկտների), տրանսպորտային միջոցների (բացառությամբ հասարակական տրանսպորտի և տաքսու) վրա կամ դրանց ներսում: Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի վրա քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսացող տարածքում (այդ թվում՝ պատշգամբներում, պատուհանների վրա և այլն) կամ արտաքին պատերին տեղադրված վճարովի գովազդային վահանակների վրա: …»

Վերոգրյալի հաշվառմամբ և դիմումում նշված հանգամանքների ուսումնասիրությամբ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը տեղում իրավիճակին ծանոթանալու համար 2022 թվականի սեպտեմբերի 22-ին կատարել է շրջայց Բյուրեղավան քաղաքում և դիտարկելով դիմումում նշված հասցեները (Բյուրեղավան քաղաքի 27, 33, 32, 38 շենքեր, Բյուրեղավան քաղաքի էլեկտրական ենթակայան)՝ արձանագրել է, որ նշված հասցեներում բազմաբնակարան շենքերի պատերի վրա փակցված են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական պաստառները: Դրա հավաստման վերաբերյալ առկա են թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի կողմից կատարված լուսանկարները: Նիստին

ներկայացված «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության լիազոր ներկայացուցիչ Աշխեն Մարուքյանը թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հարցին ի պատասխան, թե արդյո՞ք առկա են որևէ իրավական հիմքեր Բյուրեղավան քաղաքի 27, 33, 32, 38 բազմաբնակարան շենքերի և Բյուրեղավան քաղաքի էլեկտրական ենթակայանի պատերին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական պաստառները փակցնելու համար (օրինակ՝ պայմանագիր գովազդային վահանակներ տնօրինող կազմակերպության հետ, կամ քաղաքացու կողմից գրավոր համաձայնություն՝ իրեն պատկանող հատվածում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական պաստառ փակցնելու համար և ապացույց, որ այն հատվածը, որտեղ պաստառը փակցված է, պատկանում է տվյալ համաձայնություն տված անձին և այլն), նշեց, որ Բյուրեղավան քաղաքի 27, 33, 32, 38 բազմաբնակարան շենքերի և Բյուրեղավան քաղաքի էլեկտրական ենթակայանի պատերին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական պաստառները փակցնելու համար իրավական հիմքեր չի կարող ներկայացնել:

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Ընտրական հանձնաժողովները հսկում են նախընտրական քարոզչության՝ սույն օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի պահպանումը: Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից այդ կարգի խախտման դեպքում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը: Թեկնածուն, ընտրություններին մասնակցող կուսակցությունը պարտավոր են որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել ընտրական հանձնաժողովին:»:

Հիմք ընդունելով սույն դիմումով հարուցված վարչական վարույթի շրջանակներում ձեռք բերված նյութերը՝ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Բյուրեղավան քաղաքի 27, 33, 32, 38 բազմաբնակարան շենքերի և Բյուրեղավան քաղաքի էլեկտրական ենթակայանի պատերին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական պաստառները փակցված են Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի խախտմամբ և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածով՝ կիրառում է նախազգուշացում խախտում թույլ տված «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ժամկետ մինչև 2022 թվականի սեպտեմբերի 23-ը՝ ժամը 12:00-ն: Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի կանոնակարգումներն համապատասխան՝ կուսակցությունը պարտավոր է սույն որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման

հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

2.2. Դիմումում նշված է նաև, որ 15.08.2022թ.-ին ԱՁ Տիգրան Լիպարիտի Մարտիրոսյանը դիմում է ներկայացրել Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին Բյուրեղավան համայնքի տարածքում գտնվող լուսավորության հենասյուների վրա զոդման եղանակով գովազդային կրիչների տեղադրման թույլտվություն ստանալու համար և ստացել այդ թույլտվությունը, սակայն «պայմանագրերը չեն կնքվել ԱՁ Տիգրան Լիպարիտի Մարտիրոսյանի կողմից Բյուրեղավան համայնքապետարան չներկայանալու պատճառով: Եվ այժմ այդ հենասյուների վրա Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը անօրինական ձևով, կոպիտ խախտումներ թույլ տալով փակցրել է թվով 40 պաստառներ: (Լուսանկարների պատճենները կից ներկայացվում են):»:

Սույն դիմումով հարուցված վարչական վարույթի շրջանակներում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից պահանջվել և ստացվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և Տիգրան Մարտիրոսյան ԱՁ-ի միջև կնքված պայմանագիրը, որով Տիգրան Մարտիրոսյան ԱՁ-ն պարտավորվել է թվով 40 գովազդային վահանակներում տեղադրել պատվիրատուի պաստառները:

Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրության համար տեսանելի քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են փակցվել վճարովի գովազդային վահանակներում: Վարչական վարույթում առկա նյութերով հավաստվում է, որ Տիգրան Մարտիրոսյան ԱՁ-ն հանդիսանում է գովազդային վահանակներ տնօրինող կազմակերպություն, և պայմանագրի համաձայն՝ վճարովի հիմունքներով իր տնօրինության տակ գտնվող գովազդային վահանակների վրա զետեղել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական պաստառները: Թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ նշված հանգամանքներում Ընտրական օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված նախընտրական քարոզչության կարգի խախտում առկա չէ:

Ինչ վերաբերում է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման համար՝ Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202411 և 900105202064 հաշվեհամարներին համապատասխանաբար 376800 ՀՀ դրամ և 40000 ՀՀ դրամ վճարելու և ԱՁ Տիգրան Լիպարիտի Մարտիրոսյանի կողմից Բյուրեղավան համայնքի հետ պայմանագրեր չկնքելուն, ապա նշված հարցը դուրս է թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի իրավասության շրջանակներից և չի քննվում:

2.3. Դիմումի 2-րդ կետում նշված է, որ «ֆեյսբուք սոցիալական ցանցում Բյուրեղավանի Արև մանկապարտեզի և Բյուրեղավանի Ավագ դպրոցի պրոֆիլներում իրականացվում է Քաղաքացիական պայմանագիր կուսակցության գովազդներ, ինչը ևս հանդիսանում է օրենքի խախտում:»:

Համացանցում նախընտրական քարոզչությունը կանոնակարգվում է Ընտրական օրենսգրքի 20.1-րդ հոդվածով, որի համաձայն՝

«1. Համացանցում գործող զանգվածային լրատվության միջոցները, ինչպես նաև համացանցային կայքի իրավատեր հանդիսացող անձինք նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովում են ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:

2. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում համացանցում, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով, նախընտրական քարոզչությանը վերաբերող՝ վճարովի հիմունքներով գովազդային նյութեր և տեսանյութեր կարող են տեղադրվել միայն թեկնածուի, կուսակցության կամ նրա ներկայացուցչի հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա՝ նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին:

3. Նախընտրական քարոզչական նյութերի հրապարակումը պետք է ուղեկցվի «Նախընտրական քարոզչություն» լուսագրով, իսկ քարոզչական տեսանյութերի դեպքում՝ տեսանյութի վրա տեղադրվող «Նախընտրական քարոզչություն»՝ անընդմեջ ուղեկցվող լուսագրով: Նախընտրական քարոզչական նյութերի և տեսանյութերի հրապարակումը պետք է տեղեկություններ պարունակի պատվիրատուի վերաբերյալ:»:

Միաժամանակ, Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Արգելվում է նախընտրական քարոզչություն կազմակերպելը կամ կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը՝

1) հանրային ծառայության մեջ գտնվողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.»:

Դիմումին կից ներկայացված է քաղաքացի Գարիկ Աթայանի ֆեյսբուքյան էջից էկրանի լուսանկար՝ սքրինշոթ (էջ 13), որն իրենից ներկայացնում է քարոզչական նյութ և որի մեջ կա գրառում առ այն, որ Բյուրեղավանի Ավագ դպրոցը նշված է (был отмечен): Սույն վարչական վարույթի շրջանակներում դպրոցի պաշտոնական կայք այցելելով՝ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը արձանագրել է, որ որևէ քարոզչական նյութ Բյուրեղավանի Ավագ դպրոցի ֆեյսբուքյան պաշտոնական էջում առկա չէ և թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին չի հաջողվել ձեռք

բերել ապացույց առ այն, որ նախկինում նման նյութ զետեղված է եղել, դիմումատուն ևս նման ապացույց չի ներկայացրել:

Վերոգրյալի հաշվառմամբ և հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 20.1-րդ հոդվածի կանոնակարգումները՝ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ մասնավոր անձի ֆեյսբուքյան անձնական էջում որևէ նյութերի (այդ թվում՝ իրենց բնույթով քարոզչական) չի կանոնակարգվում Ընտրական օրենսգրքով և դուրս է ընտրական հանձնաժողովների իրավասության շրջանակներից:

Վերոգրյալի հաշվառմամբ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Բյուրեղավանի Ավագ դպրոցի վերաբերյալ ներկայացված հանգամանքներում Ընտրական օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված նախընտրական քարոզչության կարգի խախտում առկա չէ:

Դիմումին կից ներկայացված են նաև էկրանի լուսանկարներ՝ սքրինշոթներ (էջ 14-15), որոնք վերաբերվում են Բյուրեղավանի Արև մանկապարտեզին: Սույն վարչական վարույթի շրջանակներում թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն այցելելով Բյուրեղավանի Արև մանկապարտեզի ֆեյսբուքյան պաշտոնական էջ՝ արձանագրել է, որ մատնանշված նյութերը, որոնք, ըստ ներկայացված սքրինշոթերի, նախկինում էջում զետեղված էին, առկա չեն:

Վերոգրյալի հաշվառմամբ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ եթե անգամ Բյուրեղավանի Արև մանկապարտեզի պաշտոնական կայքում առկա են եղել քարոզչական նյութեր, ապա դրանք արդեն իսկ հեռացված են, ուստի հնարավոր առկա խախտումը վերացված է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ թիվ 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Բյուրեղավան համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող «Միասնություն» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Արմեն Ավագյանի 21.09.2022թ. դիմումը բավարարել մասնակի՝ փաստելով, որ Բյուրեղավան քաղաքի 27, 33, 32, 38 բազմաբնակարան շենքերի և Բյուրեղավան քաղաքի էլեկտրական ենթակայանի պատերին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական պաստառները փակցված են Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի խախտմամբ և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածով՝ կիրառել նախազգուշացում խախտում թույլ տված «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ժամկետ մինչև 2022 թվականի սեպտեմբերի 23-ը՝ ժամը 12:00-ն: Մնացած մասով դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով՝ օրացուցային 3 օրվա ընթացքում:

**Թիվ 28 ընտրատարածքային ընտրական**
**հանձնաժողովի նախագահ՝** **Վ. Գալոյան**